պետութեան, մինչդեռ նրա տոհմը մինչև այն ժամանակ միայն վրացի իշխանութեան կոչումն ունէր։

Իշխան Յովսէփ արքեպիսկոպոսի Ռուսաստան ժամանելուց եօթը տարի յետոյ, այն է՝ 26 յուլիսի 1780 թ Սիմէոն կաթողիկոսը վախճանուեցաւ, և օգոստոսի 2-ին Էջմիածնի միաբանութեան ընտրութեամբ կաթողիկոս օծուեցաւ Կարնեցի Ղուկաս արքեպիսկոպոսը, որ Սիմէոնի մտերիմ գործակիցն էր։ Հանգուցեալը մահուան ժամին Էջմիածնի միաբանութեան հետ խօսակցելիս՝ նրան էր մատնացոյց արել, որպէս իւր յաջորդի։ Սակայն նրա ընտրութիւնը, կամ լաւ է ասել՝ ընտրութեան եղանակը, մի քանի կնճիռներ առաջ բերաւ Կ. Պոլսի հայոց պատրիարքի կողմից։ Այն ժամանակ ծայրագոյն կաթողիկոսի համազգային ընտրութեան սկզբունքը հետեւեալ կերպով էր իրագործւում. Էջմիածնի միաբանութիւնն և Պարսկաստանի (գլխաւորապէս Արարատեան նահանգի) հայոց ներկայացուցիչները հաւաքաբար ընտրում էին մի կամ մի քանի կանդիտատ և իրենց որոշումն այդ մասին Կ. Պոլիս առաքում։ Կ. Պոլսի հայ ժողովուրդը, 'ի դիմաց Թիւրքիայի հայոց, ընտրում էր առաջարկուած կանդիտատներից մէկին, որի համար և Թիւրքիոյ պետութեան սահմանների մէջ իրաւասութիւն չնորհող «բերաթ» խնդրում Սուլթանից։

Էջմիածնի միաբանները, վախենալով մահմեդական խաների միջամտութիւնից կաթողիկոսի ընտրութեան մէջ՝ և մանաւանդ Երևանի խանի, որ Գանձասարի կաթողիկոսի դրդմամբ հակամէտ էր պաշտպանել դրա թեկնածութիւնը հայրապետական Աթոռին,—փութացին սրբազնագոյն Սիմէոնի մահից յետոյ՝ իրենց ընտրածին նստեցնել թափուր մնացած Աթոռի վրայ և նրան կաթողիկոս օծեցին՝ առանց զեկուցում տալու այդ մասին Կ. Պոլսի հայ ժողովրդեան։

Այդ հանդամանքն առիթ տուաւ Կ Պոլսի Զաքարիա պատրիարքին, որ կարծեօք ինքն էր ուզում Սիմէոնին յաջորդել, պնդելու, թէ Ղուկասն «առանց ընտրութեան ազգի է օծեալ», և թէ նա՝ Զաքարիան անկարելի է համարում «բերաթ» խնդրել Սուլթանից և կարդադրել, որ Ղուկասի անունն եկեղեցիներում յիշատակուի։ Կ. Պոլսի պատրիարքի այդ ընթացքը չատ էր տագնապում խաղաղասէր Ղուկասին։ Նա ցաւում էր ոչ այնքան իւր անձնասիրութիւնը չօշափուած համարելով, որքան Մայր Աթոռի սրբութեան և հեղինակութեան նսեմանալուց

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան